ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՈՒՄ

COVID-19 ՊԱՆԴԵՄԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆԸ

Առանցքային դիտարկումներ, արդյունքներ և առաջարկներ

Աննա Հովհաննիսյան
Ընտանեկան բռնության կանխարգելման փորձագետ

Իրականացնող գործընկերներ՝

UNFPA

UNDP

unicef for every child

Այս գնահատումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակ Աննա Հովհաննիսյանը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն գնահատման մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Յունիսեֆ-ի տեսակետների հետ:

Երևան 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

COVID-19 պանդեմիայի շրջանում տարբեր երկրների արձագանքման փորձը ընտանեկան բռնության դեպքերով. իրավաճակի նկարագրություն 6

Արագ գնահատման մեթոդաբանություն 10

Արագ գնահատման արդյունքների վերլուծություն 12

Գնահատման արդյունքում բացահայտված հիմնական փաստեր և խնդիրներ 21

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանությանը միտված առաջարկներ COVID-19 պանդեմիայի շրջանում 23

Հավելված 1. Փորձագետների ցանկ

Հավելված 2. Հարցաթերթ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր կորոնավիրուսի[1] համաճարակով պայմանավորված, աշխարհի շատ երկրներ հայտարարել են բնակիչների համար տնային պայմաններում մեկուսացման ռեժիմ: 2020 թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարեց, որ COVID-19-ից առաջացած հիվանդության տարածման հետ կապված իրավիճակը կարող է գնահատվել որպես պանդեմիա[2]: Ստեղծված իրավիճակը պահանջում է կառավարությունների կողմից հատկացնել լրացուցիչ ռեսուրսներ արձագանքելու ոչ միայն հանրության առողջության պահպանման խնդիրներին, այլ նաև պաշտպանելու տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչներին, որոնք ենթարկվում են մարդու իրավունքների ոտնահարումների մեկուսացման և արտակարգ դրության պայմաններում: Կանանց, երեխաների, տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունն ընտանեկան բռնությունից պետության կարևոր երաշխիքներից պետք է լինի, որը չպետք է անտեսվի արտակարգ դրության ժամանակաշրջանում:

Ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ոտնահարման դրսևորումներից է, որը վերջին երկու ամիսների ընթացքում գրանցել է կտրուկ աճ աշխարհի տարբեր երկրներում՝ արտակարգ դրությամբ պայմանավորված մեկուսացման պայմաններում: COVID-19-ի պատճառով համաշխարհային բնակչության մեծ մասն ինքնամեկուսացման մեջ է, մինչդեռ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար տունն ամենևին անվտանգ միջավայր չէ, քանի որ վերջիններս ստիպված են առերեսվել բռնարարների հետ: Փաստացի, իրենց տներում փակված անձանց ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակված է և կարող է իրացվել միայն սահմանափակ նպատակների համար, ինչի պատճառով շատ անձինք չեն կարողանում հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ և ակնկալել օգնություն և աջակցություն:

Արտակարգ դրության պայմաններում դպրոցների փակումը անդրադարձել է ավելի քան 1,5 միլիարդ երեխաների վրա: Տեղաշարժման սահմանափակումները, եկամտի կորուստը, ինքնամեկուսացումը և սթրեսի ու անհանգստության բարձր մակարդակը մեծացնում են երեխաների հանդեպ ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության հավանականությունը, մասնավորապես՝ այն երեխաների հանդեպ, որոնք արդեն գտնվում են բռնության կամ ոչ բարենպաստ ընտանեկան միջավայրում[3]: Կրկնակի խոցելի են նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Այս երկու խմբերի նկատմամբ արտակարգ դրության ժամանակ բռնության դրսևորումների մասին համապարփակ տվյալներ դեռևս հասանելի չեն, ինչն առավել դժվարեցնում է հնարավոր աջակցության տրամադրումը:

Տարբեր երկրների կողմից հրապարակված տվյալները վկայում են, որ կանանց նկատմամբ բռնությունն իրենց նախկին և ներկա զուգընկերների կողմից մարտ և ապրիլ ամիսների

---

[1] Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության, նոր կորոնավիրուսի համավարակը կամ SARS-CoV-2 վիրուսը, առաջին անգամ հայտնաբերվել է 2019 թ. դեկտեմբերին Չինաստանում: Վարակի փոխանցումը տեղի է ունենում օդակաթիլային ճանապարհով, մարդուց մարդ: Վարակի առավել տարածված անվանումն է COVID-19:

[2] World Health Organisation, Director-General's opening remarks at the media briefing on COVID-19. 11 March 2020. https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-COVID-19---11-march-2020

[3] "Children at increased risk of harm online during global COVID-19 pandemic" https://www.unicef.org/press-releases/children-increased-risk-harm-online-during-global-covid-19-pandemic

ընթացքում աճել է միջինում 30%-ով[4]: Տնային մեկուսացմամբ պայմանավորված ֆինանսական կարիքները, անորոշությունը, դերերի անհավասար բաշխումը, աջակցող ցանցերի բացակայությունը նպաստում է ներկա և նախկին զուգընկերների կողմից կանանց նկատմամբ բռնությանը: Ընտանեկան բռնությունը՝ որպես ստվերային պանդեմիա իր ազդեցությունն է ունենում նաև տնտեսությունների վրա:

Հայաստանում իրավիճակը ևս մտահոգիչ է, այսպես, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որի անդամներն են մի շարք հասարակական կազմակերպություններ (այսուհետ՝ ՀԿ), որոնք ծառայություններ են մատուցում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց անչափահասներին, ահազանգում են ընտանեկան բռնության առաջնային զանգերի 30% (մարտին) և 50% (ապրիլին) աճի մասին արտակարգ դրության շրջանում[5]: Հասարակական կազմակերպություններն ահազանգում են, որ տանը մնալով՝ կանայք հայտնվում են էլ ավելի խոցելի վիճակում. նրանք զանգահարում են թե՛ բռնության հետ կապված խորհրդատվության, թե՛ սոցիալական աջակցության համար: Երեխաների իրավունքների և հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությամբ զբաղվող կառույցները ևս ահազանգում են այս խմբերի նկատմամբ աճող, սակայն քողարկված բռնության դրսևորումների մասին: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում համակարգային և համալիր կերպով արձագանքել ընտանեկան բռնության դեպքերին, մշակել գործողությունների հստակ ծրագիր, որի իրագործումը կնպաստի ժամանակին և հասցեական աջակցություն տրամադրել ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում պանդեմիայով պայամանավորված ՀՀ-ում հայտարարված է եղել արտակարգ դրության ռեժիմ:

---

[4] “Violence against women and girls: the shadow pandemic” https://www.unwomen.org/en/news/stories/2020/4/statement-ed-phumzile-violence-against-women-during-pandemic

[5] «Կարանտինի պայմաններում Հայաստանում ավելացել են ընտանեկան բռնության դեպքերը», հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.azatutyun.am/a/30563169.html

COVID-19 ՊԱՆԴԵՄԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՓՈՐՁԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՎ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային իրավապաշտպան կառույցներն ահազանգում են, որ COVID-19 պանդեմիայի շրջանում ավելացել է կանանց և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության թիվը: Հասանելի վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ տարբեր երկրներում այդ ցուցանիշն աճել է՝ պայմանավորված բնակիչների տնային մեկուսացմամբ, սոցիալական, տնտեսական և առողջապահական նոր խնդիրներով:

Ֆրանսիայում, օրինակ՝ կանանց նկատմամբ բռնությունն ընտանիքում աճել է շուրջ 30%-ով սկսած մարտի 17-ից, երբ երկիրը հայտարարեց խիստ մեկուսացման ռեժիմ[6]: Կիպրոսի և Սինգապուրի թեժ գծերը ևս արձանագրել են ընտանեկան բռնության թվի աճ շուրջ 30%-ով[7]: Արգենտինայում այդ թիվն աճել է 25%-ով[8]: Ավստրալիայում բուժաշխատողների 40%-ն արձանագրել է, որ ընտանեկան բռնության ենթարկվածները մեկուսացման շրջանում դիմել են իրենց՝ համապատասխան ծառայություններ ստանալու համար[9]:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ծառայությունների պահանջարկի աճը հանգեցրել է նրան, որ բժշկական ծառայությունները, ոստիկանությունն ու սոցիալական ծառայությունները չեն կարողանում ժամանակին արձագանքել դեպքերին՝ պայմանավորված նրանով, որ մասնակցում են պանդեմիայի և մեկուսացման սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման աշխատանքներին: Վերափոխված ծառայություններն էլ[10], որոնք մատուցվում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցող կառույցների կողմից, ստեղծում են հասանելիության լուրջ խոչընդոտներ: Այսպես, օրինակ, մարտի կեսերին, Իտալիայում ընտանեկան բռնության թեժ գիծն արձանագրել էր զանգերի 55%-ի անկում, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կանայք չէին կարողանում ահազանգել բռնության դեպքի մասին՝ բռնարարի հետ միևնույն տարածքում գտնվելու պատճառով: Նմանատիպ իրավիճակ էր նաև Ֆրանսիայի հյուսիսային շրջանում՝ մարտ ամսվա վերջին[11]: Շատ երկրներում կանայք չունեն հասանելիություն համացանցին ու հեռախոսակապի միջոցներին: Ստեղծված իրավիճակում, ցանկացած երկրի կառավարություն պետք է դիտարկի կանանց և երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության թվի աճը ճգնաժամային իրավիճակներում և համապատասխան ռեսուրսներ հատկացնի առաջացած խնդիրների կարգավորման նպատակով: Օրինակ՝ Կանադայում վարչապետի կողմից որոշվեց, որ ընտանեկան բռնության ենթարկված

---

[6] “Domestic violence cases jump 30% during lockdown in France” հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.euronews.com/2020/03/28/domestic-violence-cases-jump-30-during-lockdown-in-france

[7] “Lockdowns around the world bring rise in domestic violence” հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.theguardian.com/society/2020/mar/28/lockdowns-world-rise-domestic-violence

[8] “During quarantine, calls to 144 for gender violence increased by 25%” հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. http://www.diario21.tv/notix2/movil2/?seccion=desarrollo_nota&id_nota=132124

[9] “Domestic Violence Spikes During Coronavirus As Families Trapped At Home” հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://10daily.com.au/news/australia/a200326zyjkh/domestic-violence-spikes-during-coronavirus-as-families-trapped-at-home-20200327

[10] Այդ ծառայությունները հիմնականում մատուցվում են առցանց ձևով, օրինակ՝ առցանց հոգեբանական խորհրդատվության անցկացումը բռնարարի հետ միևնույն տարածքում լուրջ խոչընդոտ է կանանց համար:

[11] “Women are using code words at pharmacies to escape domestic violence during lockdown”, հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.cnn.com/2020/04/02/europe/domestic-violence-coronavirus-lockdown-intl/index.html

անձանց համար ապաստարանները պետք է գործեն նաև արտակարգ դրության ժամանակ, ավելին, կառավարությունը հատկացրեց 40 մլն ԱՄՆ դոլար՝ ստեղծված իրավիճակում ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարաններին աջակցելու համար[12]: Իտալիայում, դատախազությունը որոշեց, որ արտակարգ դրության ժամանակ, բռնարարները պետք է լքեն տունը և ոչ թե կանայք ու երեխաները տեղափոխվեն ապաստարան: Նման որոշման պատճառն այն էր, որ երկրում շատ ապաստարաններ վերափոխվել էին կորոնավիրուսով հիվանդների մեկուսացման վայրերի: Ֆրանսիայում, պետության միջամտությամբ, հյուրանոցները տրամադրում են կացարան ընտանեկան բռնության ենթարկված անձանց ու նրանց երեխաներին: Ի լրումն այս երկրների, Ավստրալիան և Մեծ Բրիտանիան ևս լրացուցիչ ֆինանսական միջոցներ են ուղղել ընտանեկան բռնության դեմ պայքարին: Իսպանիան[13] գենդերային բռնությունից տուժած անձանց պաշտպանության և աջակցության ծառայությունների տրամադրումը ներառել է գործունեության այն կենսական տեսակների ցանկում, որոնք թույլատրվում է շարունակել արտակարգ դրության ժամանակ:

Մի շարք եվրոպական երկրներ, ինչպես օրինակ, Իսպանիան և Ֆրանսիան, հեռախոսային հաղորդագրությունների միջոցով իրազեկել են բնակչությանը, որ ընտանեկան բռնության ենթարկված, բայց համապատասխան աջակցություն ստանալու համար դիմելու հնարավորություն չունեցողները կարող են այցելել ցանկացած դեղատուն և նշել, որ ցանկանում են գնել «դիմակ-19», որն էլ բավարար կլինի, որ դեղատան աշխատակիցը զանգահարի ոստիկանություն[14]: Մեծ Բրիտանիայի որոշ շրջաններ հրահանգել են սննդի առաքիչներին և փոստատարներին լինել ուշադիր և ահազանգել ընտանեկան բռնության կասկածի դեպքում: Իսպանիայի կառավարությունը հայտարարել է առցանց զրույցի («chat») ծառայություն ստեղծելու մասին, որը ներառում է նաև աշխարհագրական տեղորոշման գործառույթ՝ տուժողներին թույլ տալով կապ հաստատել ոստիկանության հետ, ինչպես նաև առցանց զրույցի («chat») ծառայություն՝ մեկուսացման ընթացքում հոգեբանական աջակցություն ստանալու նպատակով[15]: Հնդկաստանի Ուտար Պրադեշ նահանգում, ոստիկանությունն ընտանեկան բռնության դեմ պայքարի նոր թեժ գիծ է ազդարարել և երաշխավորել, որ յուրաքանչյուր ահազանգով կզբաղվի կին ոստիկան[16]: Իռլանդիայում ոստիկանությունը հատուկ ծառայություն է նախաձեռնել՝ «Օպերացիա Ֆոյշիմ» («Operation Faoisimh») անվանմամբ, որի նպատակն է սեփական նախաձեռնությամբ կապ հաստատել բոլոր այն տուժողների հետ, ովքեր նախկինում ահազանգել են ոստիկանություն՝ ընտանեկան բռնության հետ կապված հարցով, ընդ որում,

---

[12] "Coronavirus: Trudeau announces $40M for women's shelters, $10M for Indigenous women and kids" հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://globalnews.ca/news/6778731/coronavirus-womens-indigenous-assault-centres/

[13] Real Decreto-ley 10/2020, հասանելի էր ապրիլի 30-ին, 2020 թ. https://elpais.com/espana/2020-03-28/el-gobierno-amplia-el-confinamiento-los-trabajadores-de-actividades-no- esenciales-deberan-quedarse-en-casa.html

[14] "France responds to domestic abuse rise" հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.odt.co.nz/news/world/france-responds-domestic-abuse-rise

15 ˝Europe braces for domestic abuse 'perfect storm' amid coronavirus lockdown˝ հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.swissinfo.ch/eng/reuters/europe-braces-for-domestic-abuse--perfect-storm--amid-coronavirus-lockdown/45646312

16 ˝Lockdowns around the world bring rise in domestic violence˝ հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.theguardian.com/society/2020/mar/28/lockdowns-world-rise-domestic-violence

ոստիկանությունը որդեգրել է ձերբակալումը՝ որպես միջամտության նախընտրելի տարբերակ ճանաչող քաղաքականությունը[17]:
Դատավարական համակարգը ևս հարմարեցվել է ստեղծված պայմաններին, այսպես՝ Եվրոպական միության շատ երկրների դատական նիստերն անցկացվում են առցանց եղանակով, այդ թվում՝ ընտանեկան բռնության գործերով: Արգենտինայում օրինակ, բոլոր ընթացիկ պաշտպանական որոշումներն երկարացվել են դատարանների կողմից առնվազն 60 օրով:

Այս շրջանում, մարդու իրավունքներով զբաղվող մի շարք կառույցներ հանդես եկան հայտարարություններով՝ կոչ անելով պետություններին ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ պաշտպանելու կանանց և երեխաներին ընտանեկան բռնությունից մեկուսացման շրջանում:

Մարտի 27-ին Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ-ի) կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցող Դուբրավկա Սիմոնովիչը հանդես եկավ հայտարարությամբ՝ կոչ անելով պետություններին որոշակի ջանքեր գործադրել ընտանեկան բռնությունը կանխելու և բռնության ենթարկվածներին աջակցելու համար: Համաձայն հայտարարության՝ իրավիճակն առավել սրվում է, երբ ապաստարանները սակավաթիվ են, իսկ աջակցող ծառայությունները ոչ հասանելի կանանց ու երեխաների համար: Առավել խոցելի իրավիճակում են հաշմանդամություն ունեցող կանայք, առանց փաստաթղթերի փախստական կանայք և թրաֆիքինգի զոհ կանայք: Հայտարարությունը կոչ է անում պետություններին հանդես գալ նոր գաղափարներով, որոնք կօգնեն պաշտպանել ընտանեկան բռնության ենթարկված կանանց COVID-19 պանդեմիայի շրջանում[18]:

Ապրիլի 3-ին, Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբը (ԳՐԵՎԻՈ) հանդես եկավ հայտարարությամբ, որով կոչ արեց պահպանել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի եվրոպական չափորոշիչները, որոնք սահմանված են «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով[19]: Ապրիլի 20-ին ԵԽ Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով կոնվենցիայի կողմերի կոմիտեն հրապարակեց հռչակագիր, կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ COVID-19 պանդեմիայի շրջանում: Համաձայն այդ հռչակագրի՝ պետությունները պետք է ձեռնարկեն համակարգված և հոլիստիկ/ամբողջական մոտեցում ընտանեկան բռնությանը COVID-19 պանդեմիայի շրջանում: Հռչակագիրն առաջարկում է համալիր քաղաքականության մոդել պետությունների համար, որոնցով առաջնորդվելը կօգնի վերջիններիս աջակցել և պաշտպանել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և անչափահասներին COVID-19 պանդեմիայի շրջանում[20]:

---

[17] "Quick and robust' garda response to domestic violence reports promised" հասանելի էր ապրիլի 20-ին, 2020 թ. https://www.rte.ie/news/ireland/2020/0401/1127724-gardai-domestic-violence-cases/
[18] "States must combat domestic violence in the context of COVID-19 lockdowns – UN rights expert" https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=25749&LangID=E
[19] "COVID-19 and isolation at home may increase the risk of Domestic Violence" https://www.coe.int/en/web/pristina/-/covid-19-and-isolation-at-home-may-increase-the-risk-of-domestic-violence
[20] Declaration of the Committee of the Parties to the Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence (Istanbul Convention) on the implementation of the Convention during the COVID-19 pandemic https://rm.coe.int/declaration-committee-of-the-parties-to-ic-covid-/16809e33c6

Այսպիսով, ստեղծված իրավիճակում տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը և մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների սահմանումը COVID-19 պանդեմիայի շրջանում վկայում է, որ ընտանեկան բռնության թվի աճը ստիպում է կառավարություններին ձեռնարկել լրացուցիչ միջոցներ, որոնցով կպաշտպանվեն ընտանեկան բռնության ենթարկված անձինք: Այս գործընթացում ընտանեկան բռնության ենթարկված երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներն ու առանձնահատկությունները պետք է դիտարկվեն հրատապ խնդիր, և մշակվեն ու իրագործվեն նոր ռազմավարություններ:

ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս գնահատման նպատակն էր բացահայտել պետական և հասարակական կառույցների արձագանքն ընտանեկան բռնությանը ՀՀ-ում՝ COVID-19 պանդեմիայի և դրա արդյունքում հայտարարված արտակարգ դրության պայմաններում, ինչպես նաև այդ կառույցների կարիքներն այդ դեպքերին արձագանքը տրամադրելու կամ բարելավելու հարցում:

Ստեղծված իրավիճակում կարևոր էր հասկանալ, թե Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերով աշխատող կառույցներն ինչպես են կազմակերպում իրենց աշխատանքները, ինչպիսին է համագործակցությունը պետական և հասարակական կազմակերպությունների միջև, որոնք են ընտանեկան բռնության ենթարկվող անձանց հիմնական կարիքները, ինչպիսին է որոշում կայացնողների արձագանքն ընտանեկան բռնությանը: Սա կնպաստի առավել զոհակենտրոն և գենդերազգայուն քաղաքականության ձևավորմանը՝ դարձնելով աջակցությունը հասցեական արտակարգ դրության ժամանակաշրջանում և դրանից հետո: Կարևոր է արձանագրել, որ արտակարգ դրության ավարտից հետո էլ ընտանեկան բռնության դեպքերով արձագանքը պետք է համապատասխանի ստեղծված իրավիճակին, քանի որ դեռ երկար ժամանակ ենթադրվում է, որ ծառայությունները չեն կարող մատուցվել այն նույն կերպ, ինչպես մատուցվել էին նախքան պանդեմիա հայտարարվելը:

Գնահատման շրջանակներում իրականացվել է որակական հետազոտություն՝ կիրառելով փաստաթղթերի վերլուծության մեթոդը՝ համեմատական վերլուծություն կատարելու համար, և խորին հարցազրույցների մեթոդը:
Տեղեկատվության հավաքագրման նպատակով իրականացվել են առցանց եղանակով 28 անհատական խորին հարցազրույցներ, այդ թվում՝

- ✓ քաղաքականություն մշակող կառույցների ներկայացուցիչների հետ,
- ✓ ծառայություններ մատուցողների հետ, որոնք աշխատում են կանանց, երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում և իրենց ամենօրյա աշխատանքում առնչվում են ընտանեկան բռնության հիմնախնդրին,
- ✓ իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ:

Փորձագետների ցանկը (տե՛ս, հավելված 1) կազմվել է հաշվի առնելով ՀՀ վարչապետի N 1685-Ա որոշումով ստեղծված «Ընտանիքում բռնության կանխարգելման» խորհրդի անհատական կազմում ներգրավված փորձագետների ցանկը[21]: Սակայն տվյալ գնահատման շրջանակներում հարցազրույցներ են իրականացվել ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող նաև այլ կառույցների ներկայացուցիչների հետ: Խորին հարցազրույցներն իրականացվել են ապրիլի 20-մայիսի 7-ն ընկած ժամանակահատվածում՝ նախապես մշակված հարցաթերթի միջոցով (տե՛ս, հավելված 2):

Առաջարկների մշակման համար հիմք է ծառայել ինչպես փորձագետներից ստացված տեղեկատվության վերլուծությունը, այնպես էլ փաստաթղթերի բովանդակային վերլուծության մեթոդի կիրառումը, մասնավորապես՝ ուսումնասիրվել են ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի,

[21] ՀՀ վարչապետի N 1685-Ա որոշում «Ընտանիքում բռնության կանխարգելման» խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=133418

Եվրոպական միության և այլ առաջատար կառույցների կողմից լույս տեսած հրապարակումները, որոնք վերաբերվել են ընտանեկան բռնության արձագանքին COVID-19 պանդեմիայի շրջանում:

ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավապահ մարմինների արձագանքը

Ոստիկանության տրամադրած վիճակագրությունը և ընթացիկ աշխատանքները

Համաձայն ՀՀ ոստիկանության՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի շրջանում ընտանեկան բռնության դեպքերի աճ չի արձանագրվել. 2020 թ. մարտի 16-ից ապրիլի 20-ը գրանցվել է ընտանեկան բռնության 180 ահազանգ (2019 թ. նույն ժամանակահատվածում՝ 170 ահազանգ), որից 115-ը ամուսնու կամ նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, 8-ը՝ անչափահասի նկատմամբ[22]:

Ոստիկանության աշխատանքներում, արտակարգ դրության ռեժիմով պայմանավորված, ոչ մի փոփոխություն չի արձանագրվել: Ինչպես նախկինում, ահազանգի դեպքում ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները ժամանում են դեպքի վայր, գնահատում իրավիճակը, իրականացնում ընտանեկան բռնության ռիսկի գնահատում: Պաշտպանական միջոցներից՝ նախազգուշացումը և անհետաձգելի միջամտության որոշումները կիրառվում են ոստիկանների կողմից: 2020 թ. հունվարի 1-ից ապրիլի 28-ի դրությամբ, նախազգուշացում կիրառելու մասին 251 որոշում է կայացվել (հունվարին-50, փետրվարին-67, մարտին-86, ապրիլի 1-ից 28-ը՝ 48) և անհետաձգելի միջամտության՝ 82 որոշում (հունվարին-19, փետրվարին-23, մարտին-24, ապրիլի 1-ից 28-ը՝ 16):

ՀՀ քննչական կոմիտեի աշխատանքները

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.03.20 թ.-ի N 41-Ն հանձնարարականով՝ նախաքննություն իրականացնող ստորաբաժանումների ծառայողները, հնարավորության դեպքում, պետք է հետաձգեն քննչական և այլ դատավարական գործողությունների կատարումը, բացառությամբ՝ անհետաձգելի քննչական և այլ դատավարական գործողությունների: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հատուկ հանձնարարականով՝ ինչպես նախկինում իրականացվել է ընտանեկան բռնության գործերով քննությունը, այս շրջանում, շարունակվում է իրականացվել նույն կերպ:

Քննչական կոմիտեի ներկայացուցչի կողմից վիճակագրական տվյալներ չներկայացվեցին, քանի որ քրեական գործերով վիճակագրական տվյալները վարվում են կիսամյակային և տարեկան կտրվածքով:

Բոլոր ստորաբաժանումներն ապահովված են վարակից անձնական պաշտպանական միջոցներով, անհրաժեշտության դեպքում դրանք տրամադրելով նաև քննչական գործողություններում ներգրավված անձանց, այդ թվում՝ տուժողներին:

Դատախազության աշխատանքները

Արտակարգ դրության շրջանում, ընտանեկան բռնության դեպքերով արձագանքման տեսանկյունից, դատախազների լիազորությունները հաշվի առնելով, պետք է դիտարկել մասնավոր մեղադրանքի դեպքերը հանրային կարգով քննելու անհրաժեշտությունը: Նման դեպքերում անհրաժեշտություն է առաջանում ընդունել ընտանեկան բռնությունից տուժած անձին և քննարկել մասնավոր բողոքը հանրային կարգով շարունակելու հիմքերը: Չնայած որ քրեադատավարական կարգավորումներով նման ընթացակարգ նախատեսված չէ, բայց քանի որ

[22] «Ընտանեկան բռնության դեպքերի աճն արտակարգ դրության ժամանակ» առցանց ասուլիս 22.04.2020 թ. հասանելի է՝ https://www.facebook.com/article3club/videos/538292706888772/

դատախազն ունի նման լիազորություն, արտակարգ դրության շրջանում, որոշ դատախազներ իրականացրել են այդ լիազորությունները հեռախոսակապի միջոցով և ոչ թե դեմ առ դեմ հանդիպման շրջանակներում: Հարկ է նշել, որ այնուամենայնիվ, որոշ դատախազներ հանդիպել են նաև դեմ առ դեմ տուժողների հետ և քննարկել գործերի հետագա ընթացքը: Այսպես, Արարատի մարզում արտակարգ դրությունից հետո, 40 ընտանեկան բռնության դեպքով մասնավոր մեղադրանքը հանրային կարգով շարունակելու անհրաժեշտություն է առաջացել, որից 13 դեպքով դատախազները կազմակերպել են ընդունելություն՝ ձեռնարկելով վարակից անհատական պաշտպանիչ միջոցառումներ: Ընդհանուր առմամբ, դատախազությունում ընտանեկան բռնության գործերով արձագանքման օպերատիվությունը չի տուժել արտակարգ դրության շրջանում, սակայն այս սահմանափակումներն ազդել են ընդհանուր արդյունավետության վրա, որովհետև որոշ տուժողներ հեռախոսազանգի միջոցով հրաժարվել են քննարկել դատախազի հետ դեպքի մանրամասները, հրաժարվել են նաև դեմ առ դեմ հանդիպումից՝ պատճառաբանելով պանդեմիայի վտանգը, որի արդյունքում էլ այդ գործերը չեն շարունակվել հանրային մեղադրանքով: Կառույցի կողմից վիճակագրություն չներկայացվեց, քանի որ արտակարգ դրության շրջանում ընտանեկան բռնության դեպքերով առանձին վիճակագրություն չի վարվում:

<u>Հրատապ խնդիրներ</u>

Համաձայն ՀԿ-ների ներկայացուցիչների՝ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող հերթապահ ոստիկանները տեղեկացված չեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կառույցների կոնտակտային տվյալների մասին: Բացի այդ, միջմարզային/միջքաղաքային հանրային տրանսպորտի աշխատանքների կասեցման ժամանակահատվածում, ընտանեկան բռնության ենթարկված անձինք, ովքեր փախել են բռնարարից և հայտնվել ոստիկանների ուշադրության դաշտում, պետք է ուղեկցվեն աջակցող կառույցներ. մինչդեռ դեպքերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ նմանատիպ պրակտիկա ձևավորված չէ: Ինչպես կարելի է եզրակացնել Ոստիկանության տրամադրած տվյալների վերլուծությունից, արտակարգ դրության շրջանում պաշտպանական միջոցներից՝ նախազգուշացումը շարունակում է կիրառվել առավել հաճախ: ՀԿ-ները նշում են, որ այս ընթացքում տեսակապի միջոցով քննչական գործողությունների և դատական նիստերին չեն մասնակցել, հրատապ քննչական գործողություններն իրականացվել են դեմ առ դեմ տարբերակով, իսկ դատական նիստերը՝ հետաձգվել են:

Ընտանեկան բռնության ոլորտում քաղաքականության մշակողների կատարած աշխատանքը և ոլորտում պանդեմիայով պայմանավորված առաջացած խնդիրները[23]

Այս կառույցների ներկայացուցիչներից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ արտակարգ դրության շրջանում այս գերատեսչությունները չունեն մշակած հատուկ ծրագրեր կամ ընթացակարգեր ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար:

[23] Քաղաքականություն մշակողներից հարցազրույցներ են իրականացվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ պետության կողմից պատվիրակված ծառայությունների նկատմամբ չի իրականացվում մշտադիտարկում, մասնավորապես՝ ապաստարաններում մեկուսացման պահանջները և կանոնները սահմանվել են հասարակական կազմակերպության հայեցողությամբ, հրատապ դեպքերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց ընդունելու, մասնագիտական խորհրդատվություն կազմակերպելու կանոնները ևս հստակ սահմանված չեն կազմակերպությունների համար, բացակայում է մասնագիտական միջամտության ճգնաժամային գործիքակազմը և աջակցության լրացուցիչ ռեսուրսներ չեն հատկացվել: 14.05.2020 թ.-ի դրությամբ, չի գործում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, պետության կողմից տրամադրվող, միանվագ դրամական աջակցության դիմելու ընթացակարգը, մասնավորապես, դեռևս ձևավորված չէ բազմամասնագիտական խումբը, որը պետք է իրականացնի շահառուների ընտրությունը:

14.05.2020 թ.-ի դրությամբ, չի կազմակերպվել «Ընտանիքում բռնության կանխարգելման» խորհրդի նիստ՝ արտակարգ դրության շրջանում ընտանեկան բռնությանը վերաբերող խնդիրները քննարկելու համար:

Չնայած որ առանձին ծրագրեր չեն իրականացվում այս գերատեսչությունների կողմից ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար արտակարգ դրության պայմաններում, սակայն այլ ծրագրերից բռնության ենթարկված անձինք կարող են օգտվել: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերից, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ասիական զարգացման բանկի համատեղ ծրագրից, որով կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության և հեռավար կրթության պայմաններում՝ աշակերտներին, ուսուցիչներին և ծնողներին կտրամադրվի սոցիալ-հոգեբանական աջակցություն, որի միջոցով կբացահայտվեն հեռավար կրթության պայմաններում աշակերտների, ուսուցիչների և ծնողների մոտ ի հայտ եկող հիմնական հոգեբանական խնդիրները, կձևավորվի այդ իրավիճակում սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման արդյունավետ գործիքակազմն ու մեթոդաբանությունը և կտրամադրվեն անհրաժեշտ աջակցության ծառայությունները: Այս վերջին ծրագիրը կարող է օգնել նաև բացահայտել բռնության ենթարկվող երեխաներին և արձագանքել այդ դեպքերին:
Պետական որևէ հատուկ քաղաքականություն, իրազեկման շարունակական արշավ[24] կամ կանխարգելիչ միջոցառում 14.05.2020 թ.-ի դրությամբ, չի իրականացվել ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ արձագանք տրամադրելու համար արտակարգ դրության շրջանում: Հանրային հեռուստատեսությունը կանոնավոր կերպով չի իրազեկում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն մատուցող կազմակերպությունների թեժ գծերի վերաբերյալ, չնայած որ, մոտ ապագայում, Արդարադատության նախարարությունը և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պլանավորում են իրազեկել հանրությանն ընտանեկան բռնության վերաբերյալ:
Անհրաժեշտ է նաև արձանագրել, որ գերատեսչությունները հստակ գիտակցում են ընտանեկան բռնության ոլորտում առկա խնդիրներն արտակարգ դրության պայմաններում, սակայն նրանցից

[24] Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից իրականացվել են իրազեկման միջոցառումներ արտակարգ դրության շրջանում, որի մանրամասները կներկայացվեն հաջորդ բաժնում:

յուրաքանչյուրի ստանձնած այլ մաշտաբային ծրագրերը, թույլ չեն տալիս ժամանակին և պատշաճ կերպով արձագանքել նաև այս հիմնախնդրին:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործունեությունն ընտանեկան բռնության դեպքերով

Վիճակագրություն

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն արձանագրել է ընտանեկան բռնության դեպքերի աճ, մասնավորապես՝ մարտի 15-ից ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է ընտանեկան բռնության 15 ահազանգ (2019 թ. մարտին արձանագրվել է 5 դեպք):

Գրանցված դեպքերը և արձագանքը

Չնայած առանձին ծրագիր նախատեսված չէ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար, սակայն դեպքերին արձագանքը գրասենյակի կողմից իրականացվում է ինչպես նախկինում, ավելին, ստեղծվել է հատուկ խումբ, որն արձագանքում է այս շրջանում ընտանեկան բռնության ահազանգման դեպքերին: Բացի այդ, այս շրջանում պաշտպանի գրասենյակը պարզեցրել է ընտանեկան բռնության դեպքերով նախատեսվող արձագանքի ընթացակարգը, նախատեսելով՝ բանավոր բողոքի և ահազանգի հիման վրա արձագանք: Պաշտպանի գրասենյակը հրապարակել է իրազեկող տեսահոլովակ ընտանեկան բռնության, հնարավոր աջակցության, թեժ գիծ հեռախոսահամարի վերաբերյալ:

Ընտանեկան բռնության դեպքերում պաշտպանի գրասենյակ հիմնականում դիմում են իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով: Այս օրերին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը կապ է հաստատել ծառայություններ մատուցող ՀԿ-ների հետ և առաջարկել առավել սերտ համագործակցություն ընտանեկան բռնության դեպքերով: Մարդու իրավունքների պաշտպանը նաև դիմել է Պարետին և Ոստիկանության պետին հատուկ առաջարկներով, մասնավորապես՝ արտակարգ դրության պայմաններում բռնության ենթարկված անձի համար պետք է հասանելի լինեն իրավունքների պաշտպանության անհրաժեշտ հնարավորություններն ու աջակցության բոլոր ծառայությունները (առողջապահական, սոցիալական, հոգեբանական և այլն), ինչպես նաև բոլոր հերթապահ ոստիկանները պետք է հատուկ հրահանգավորումներ ստանան ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցություն ցուցաբերելու և նրանց ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ:

Ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների արձագանքն ընտանեկան բռնությանը

Վիճակագրություն

Մարտի 16-ից ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի անդամ կազմակերպություններն արձանագրել են 803 ընտանեկան բռնության առաջնային ահազանգ, որը շուրջ 30%-ով ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ստացված ահազանգերի ընդհանուր թիվը: «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն ապրիլ ամսին ունեցել է 79 առաջնային զանգ, որը 50%-ով ավելի է քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ստացված զանգերի ընդհանուր թիվը: Սակայն կարևոր է

նաև արձանագրել, որ զանգերի շուրջ 50%-ը վերաբերում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց կողմից սոցիալական աջակցություն ստանալու հնարավորություններին:
Ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ պետության կողմից պատվիրակված ծառայություններ մատուցող մարզային 10 կենտրոնները միասին, փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում արձանագրել են ընտանեկան բռնության 160 ահազանգ[25]:

Իրավապահ մարմինների և դատարանների աշխատանքը

Համաձայն ՀԿ-ների՝ իրավապահ մարմիններն ու դատական համակարգն իրենց աշխատանքներում որևէ ընթացակարգային փոփոխություններ չեն իրականացրել, ՀԿ-ների փաստաբաններն են սովորաբար միջնորդում ոչ հրատապ դեպքերում հետաձգել տուժողի հարցաքննությունը, կամ առերեսումը, մինչդեռ հրատապ դեպքերում, բոլոր ընթացակարգերը պահպանվել են, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունները և հարցաքննությունների անցկացումը, կասկածյալի հետ առերեսումը: Արտակարգ դրության օրերին դատարանների կողմից պաշտպանական որոշումները շարունակում են կիրառվել՝ որպես ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանական միջոց: Երեխաների բնակության վայրի, ալիմենտի, ամուսնալուծության, բռնության գործերով դատական նիստերը հիմնականում հետաձգվում են այս օրերին:

ՀԿ-ները կարևորում են առցանց հարցաքննության և առերեսման պրակտիկայի ներդրման, ինչպես նաև դատական նիստերի առցանց անցկացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ ՀԿ-ների ներկայացուցիչները նշում են, որ Քննչական կոմիտեի առանձին ստորաբաժանումներ, ոչ հրատապ դեպքերում չեն կիրառում հարցաքննության առցանց մեթոդը՝ պատճառաբանելով, որ չունեն իրավական հիմքեր դա անելու համար:
Ստացված տեղեկատվությունը վկայում է, որ ընտանեկան բռնության գործերով դատական նիստերն արտակարգ դրության շրջանում հիմնականում հետաձգվում են, սակայն մայիսի 5-ի դրությամբ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն արձանագրել էր դեպք, երբ դատարանը բեկանել էր բռնարարի նկատմամբ կիրառված պաշտպանական որոշումը: Որոշ դատարաններ անցկացնում են իրենց նիստերն առցանց տարբերակով, սակայն ընտանեկան բռնության որևէ գործով նման նախադեպ, առ 14.05.2020 թ., հայտնի չէ:

ՀԿ-ների աշխատանքն ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ

Մեկուսացման պայմաններում շատ կազմակերպություններ սկսել են աշխատել հեռահար և առցանց տարբերակով՝ տրամադրելով հեռախոսային խորհրդատվություն, սակայն բոլոր հրատապ դեպքերում կազմակերպությունների ներկայացուցիչները խախտում են մեկուսացման որոշումը և կարող են հանդիպել ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ իրենց գրասենյակներում: Իրավիճակը խնդրային է դարձել նաև միջմարզային/միջքաղաքային հանրային տրանսպորտի գործառնման կասեցման հետ կապված, որովհետև շատ կազմակերպություններ չունեն սեփական ավտոմեքենա և չեն կարողանում հանդիպել կանանց հետ՝ հրատապ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար:

[25] Այս կենտրոնները գործառնում են 2020 թ. փետրվարից, այդ իսկ պատճառով, վիճակագրության համեմատական վերլուծություն հնարավոր չէ ներկայացնել:

Ընտանեկան բռնության դեպքերին աջակցող մի քանի թեժ գծերի առկայության դեպքում, բռնության ենթարկված անձի համար շատ դժվար է կողմնորոշվել, թե դրանցից որ մեկին կարող է դիմել աջակցություն ստանալու համար: Բացի այդ, այդ թեժ գծերը հիմնականում ունեն բոպեավարձ, սակայն հարկ է նշել, որ մասնագետները հետզանգ են կատարում բոլոր այն դեպքերում, երբ անձը չունի բավարար միջոցներ զանգը կատարելու համար: Այս տեսանկյունից, ազգային մեկ միասնական թեժ գիծ ծառայության առկայությունն արտակարգ դրության օրերին կարող էր կարևոր աջակցման մեխանիզմ լինել ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար:

Շատ կազմակերպություններ և մասնավորապես՝ մարզային նորաստեղծ կենտրոնները, չունեն մշակված ընթացակարգեր այս օրերին շահառուներին աջակցություն տրամադրելու համար, չունեն մշակված նաև անվտանգության կանոններ:

Հասարակական կազմակերպություններն իրականացնում են ներկա և նախկին շահառուների դեպքերի մշտադիտարկում՝ ուշադրության կենտրոնում պահելով այն կանանց ու երեխաներին, ովքեր մեկուսացված են բռնարարների հետ միևնույն տան մեջ:

<u>Ընտանեկան բռնության ենթարկված անձանց կարիքները</u>

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ տարիներ աշխատող կազմակերպություններին ահազանգում են այն շահառուները, ովքեր ներկայումս առանձնացել են բռնարարներից և ինքնուրույն կյանք սկսել: Այս կանայք հիմնականում հայտնվել են սոցիալ-տնտեսական անկայուն վիճակում մեկուսացման պատճառով և ակնկալում են հումանիտար աջակցություն կազմակերպություններից:

Ընտանեկան բռնության ենթարկված կանայք չեն կարողանում օգտվել պետական աջակցության ծրագրերից, քանի որ չունեն համակարգչային հմտություններ կամ համացանցին միանալու հնարավորություն: Շատ կանայք և երեխաներ դեռևս ունեն համացանցի և օժանդակ սարքավորումների բացակայություն, ինչի պատճառով չեն կարողանում ստանալ մասնագիտական ծառայություններ առցանց տարբերակով: Խնդրային է նաև պետական աջակցության ծրագրերի հասանելիությունն ընտանեկան բռնության ենթարկված այն կանանց համար, ովքեր առանձնացել են բռնարարներից, միայնակ են դաստիարակում իրենց երեխաներին, սակայն բռնարարի աշխատելու պատճառով զրկվել են այդ աջակցությունից:

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի միջոցներով այս օրերին ֆինանսական աջակցություն է ստացել ընտանեկան բռնության ենթարկված 30 կին Երևանում և մարզերում՝ առաջնային կարիքները հոգալու համար:

Շատ հասարակական կազմակերպություններ աջակցում են ոչ միայն ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այլ նաև բնակչության տարբեր խմբերին՝ նրանց առցանց գրանցելով պետական աջակցության ծրագրերին:

<u>Ապաստարանները</u>

Հայաստանում գործող 2 ապաստարանները, որոնք ստանում են նաև պետական համաֆինանսավորում, շարունակում են գործառնել արտակարգ դրության պայմաններում՝

ընդունելով նոր կանանց և երեխաների: Մարտ ամսին ապաստարաններում ապաստանվել է 9 կին և 18 երեխա, իսկ ապրիլին՝ 10 կին և 9 երեխա: Հարկ է նշել, որ ապաստարանները չունեն հատուկ պայմաններ նոր ապաստանվող կանանց և երեխաների 14-օրյա մեկուսացումն ապահովելու համար: Արտակարգ դրության ռեժիմի հայտարարումից անմիջապես հետո, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն դիմել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ առանձին բնակարան վարձակալելու համար լրացուցիչ աջակցություն ստանալու նպատակով, սակայն նախարարությունն առաջարկել է առկա ռեսուրսների շրջանակներում կազմակերպել մեկուսացումը: Ապաստարանի աշխատակիցներն առանձնացրել են մեկ ապաստարանում առանձին սենյակ, որտեղ նոր ապաստանվողները պետք է անցկացնեն 14 օր, սակայն այդ սենյակի զբաղված լինելու պարագայում, նոր դեպքերի ապաստանումը կդառնա վտանգավոր մնացած կանանց համար: Հարկ է նաև նշել, որ կազմակերպությունը փորձում է հայթայթել լրացուցիչ միջոցներ՝ նոր դեպքերի համար առանձին տուն վարձակալելու համար, որտեղ նոր դեպքերը կմեկուսանան:

Իրազեկումը

Այս օրերին ՀԿ-ների թեժ գծերի մասին տեղեկատվությունը հիմնականում տարածվում է սոցիալական ցանցերի միջոցով: Մարզային ՀԿ-ներից մեկը պայմանավորվածություն է ձեռք բերել Կարմիր խաչի ընկերության մարզային գրասենյակի հետ, որն այս օրերին հումանիտար օգնություն է բաժանում սոցիալ-տնտեսական դժվար իրավիճակում հայտնված ընտանիքներին, այն է՝ սննդի փաթեթների մեջ տեղադրել իրենց թեժ գծի հեռախոսահամարը և ծառայությունների մասին տեղեկատվությունը: Այս օրինակը կարող է կիրառելի լինել հումանիտար օգնություն բաժանող այլ կառույցների դեպքում ևս, որոնք կարող են նպաստել տեղեկատվության տարածմանը: Որոշ կազմակերպություններ պլանավորում են նաև իրազեկող պաստառներ փակցնել մթերային խանութներում և դեղատներում, ինչի կապակցությամբ դիմել են Պարետին, սակայն մինչ 14.05.2020 թ. դեռևս արձագանք չեն ստացել:

Կազմակերպությունների կարիքները

Չնայած որ արտակարգ դրության օրերին ծառայություններ մատուցողները հայտնվել են ընտանեկան բռնության դեմ պայքարի առաջնագծում, ծառայություններ մատուցող նորաստեղծ մարզային 10 կենտրոններից 9-ը, որոնք պետական աջակցությամբ աշխատող հասարակական կազմակերպություններ են, չունեն անգամ վարակից պաշտպանվելու անվտանգության միջոցներ (դիմակներ, ձեռնոցներ, ալկոգել, ջերմաչափ): Տրանսպորտային միջոցների բացակայությունը ևս խնդրային է նորաստեղծ կենտրոնների համար, քանի որ մասնագետները դժվարությամբ են կարողանում հասնել անգամ գրասենյակ: Մարզային կենտրոնները չունեն նաև բավարար քանակի հեռախոսներ և համակարգիչներ, որ հեռավար ձևով կազմակերպեն իրենց աշխատանքները դեպքերի հետ: Այս օրերին առավել հրատապ է դարձել ընտանեկան բռնության ենթարկված անձանց հումանիտար աջակցության տրամադրումը և դեպքերի մշտադիտարկումը: Մարզային 10 ՀԿ-ների ներկայացուցիչները նշեցին, որ այս օրերին ունեն նաև մարդկային ռեսուրսների պակաս, քանի որ օգնում են բնակչության տարբեր խմբերին՝ դիմելու պետական աջակցության ծրագրերին:

Ընտանեկան բռնության դեպքերով աջակցող պետական 6 կենտրոնների արձագանքն ընտանեկան բռնության դեպքերին

Վիճակագրություն

Արտակարգ դրության շրջանում, 6 կենտրոնները գրանցել են ընտանեկան բռնության 27 դեպք, որից 8-ի դեպքում բռնությունն արձանագրվել է երեխաների նկատմամբ ընտանիքի անդամի կողմից: Դեպքերը հիմնականում ուղղորդվում են ոստիկանության կողմից՝ պաշտոնական նամակների միջոցով:

Կենտրոնների աշխատանքն ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ

Կենտրոններն աշխատում են առցանց տարբերակով: Մասնագետները շարունակում են կապ պահպանել իրենց բոլոր շահառուների հետ, աջակցում ընտանիքներին սոցիալական աջակցության ծրագրերին գրանցվելու հարցում: Ընտանեկան բռնության նոր դեպքերով, կենտրոնների մասնագետները հեռախոսային կապ են հաստատել այդ անձանց հետ, սակայն բոլոր անձինք հրաժարվել են ծառայություններից:

Մարտ և ապրիլ ամիսներին Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ն ապաստանել է 6 երեխա, որից 3-ը՝ բռնության ենթարկված: Ներկայումս այս կենտրոնը միակն է, որ ապաստանում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին, քանի որ Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը չի ընդունում նոր երեխաների՝ կարանտինային պայմաններ չունենալու պատճառով: Այս օրերին, 6 կենտրոններն իրենց ցերեկային ծառայությունների շրջանակներում մատուցվող սնունդը վերաբաշխել են և տրամադրել իրենց շահառու ընտանիքներին:

Երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորման առանձնահատկությունները և արձագանքը

Երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների և իրավիճակի գնահատման բացակայությունը նպաստել է նրան, որ այս խմբերի նկատմամբ բռնության դրսևորումներն այս օրերին առավել լատենտային/քողարկված են:

Եթե նախկինում ընտանեկան բռնության դեպքերով աշխատող ՀԿ-ներն ունենում էին հաշմանդամություն ունեցող անձանցից ահազանգեր ևս, ապա այս օրերին, նման դեպքեր չեն արձանագրվել ոչ մի կազմակերպության կողմից: Տվյալներ չի հայտնել նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչը: Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող հասարակական կազմակերպությունն իրականացնում է ընտանեկան բռնության ենթարկված շահառուների դեպքերի մշտադիտարկում, սակայն հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում, հավաստի տեղեկատվություն ընտանիքի կողմից կարող է չներկայացվել:

Հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց բռնության դեպքերով աջակցող առանձին թեժ գիծ չկա. կանանց և երեխաների իրավունքներով զբաղվող առկա թեժ գծերը կարող են տրամադրել ընդհանուր բնույթի տեղեկատվություն բռնությունից պաշտպանվելու և արձագանքելու վերաբերյալ, սակայն հեռախոսային խորհրդատվությունը կարող է հասանելի չլինել լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Հասանելիության տեսանկյունից մեկ այլ

խոչընդոտ է նաև շրջանառվող տեղեկատվությունը թեժ գծերի վերաբերյալ, որը հարմարեցված չէ լսողության և տեսողության խնդիրներ ունեցող անձաց համար:

Երեխաների դեպքում իրավիճակը ևս հստակ չէ, քանի որ օբյեկտիվորեն ստեղծված իրավիճակը նպաստում է երեխաների նկատմամբ բռնության աճին, սակայն պաշտոնական վիճակագրության բացակայությունը ստեղծել է մի իրավիճակ, երբ երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության աճի վերաբերյալ մասնագետները խոսում են ենթադրյալ թվերի կոնտեքստում:

Երեխաների իրավունքների պաշտպանության ցանցը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և երեխաների պաշտպանությամբ զբաղվող այլ կազմակերպությունները արտակարգ դրության պայմաններում ստեղծել են առցանց հանդիպումների հարթակ, որի շրջանակներում ամեն շաբաթ քննարկում են երեխաներին առնչվող տարբեր թեմաներ, այդ թվում՝ արձագանք ընտանեկան բռնությանը արտակարգ դրության պայմաններում: Երեխաների իրավունքներով զբաղվող այս հարթակի կողմից ստեղծվել է մեկ միասնական թեժ գիծ, որի հիմնական նպատակն է բացահայտել և արձագանքել երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերին: Թեժ գիծ ծառայության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում շրջանառվում է սոցիալական մեդիայով:

Այս ոլորտում կազմակերպությունները փորձում են քարտեզագրել տարբեր խոցելի խմբերի երեխաներին, օրինակ՝ Վորլդ Վիժնը տրամադրել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կրթությունից դուրս մնացած երեխաների ցանկ, որի միջոցով կարող են բացահայտվել նաև ընտանեկան բռնության ենթարկված երեխաներ: Խնդրային է նաև հատուկ դպրոցներից տուն վերադարձած հաշմանդամություն ունեցող երեխաների իրավիճակը, քանի որ բռնության ենթարկվելու տեսանկյունից, այս խումբը ռիսկային է: ԼԳԲՏ անձանց հետ աշխատող կազմակերպությունն այս օրերին ահազանգում է ծնողների կողմից իրենց նույնասեռական երեխաներին բռնության ենթարկելու դեպքերի թվի աճի մասին, նշելով, որ երեխաները անչափահաս են և փաստացի չեն կարող դուրս գալ ընտանիքից, ինչպես նաև հրաժարվում են դիմել իրավապահ մարմիններին:

Երեխաների իրավունքներով զբաղվող կառույցներն առցանց ծնողավարման դասընթացներ են առաջարկում ծնողներին, այդ թվում՝ բռնությունից զերծ մնալու վերաբերյալ, իրազեկում միասնական թեժ գծի տվյալները, շարունակում կապ պահպանել իրենց ներկա և նախկին շահառուների հետ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

- Ոստիկանության տվյալներով՝ արտակարգ դրության օրերին ընտանեկան բռնության դեպքերի թիվը չի աճել, մինչդեռ հասարակական կազմակերպություններն ահազանգում են առաջնային դեպքերի շուրջ 30-50% աճի մասին:
- Իրավապահ և դատական մարմինները շարունակում են իրենց աշխատանքները տուժողների և կասկածյալների հետ նախկին ընթացակարգերով. հարցաքննություններն ու առերեսումները, փորձաքննություններն անցկացվում են հիմնականում դեմ առ դեմ: Ոչ հրատապ դեպքերում, այս գործընթացներն, ինչպես նաև դատական նիստերը կարող են հետաձգվել կողմերի միջնորդությամբ:
- Հասարակական կազմակերպությունները կարևորում են առցանց հարցաքննության և առերեսման պրակտիկայի ներդրման հնարավորությունները քննիչների կողմից, ինչպես նաև դատական նիստերի առցանց անցկացման հնարավորությունները: Մինչդեռ գնահատման ընթացքում, ծառայություններ մատուցողների մոտ նմանատիպ պրակտիկա դեռևս չի գրանցվել: ՀԿ-ներն արձանագրում են, որ Քննչական կոմիտեի առանձին ստորաբաժանումներ, ոչ հրատապ դեպքերում չեն կիրառում հարցաքննության առցանց մեթոդը՝ պատճառաբանելով, որ չունեն իրավական հիմքեր դա անելու համար:
- Ոստիկանության տրամադրած տվյալների վերլուծությունը վկայում է, որ արտակարգ դրության շրջանում պաշտպանական միջոցներից՝ նախազգուշացումը շարունակում է կիրառվել առավել հաճախ:
- Արտակարգ դրության օրերին դատարանների կողմից պաշտպանական որոշումները շարունակում են կիրառվել՝ որպես ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանական միջոց:
- ՀԿ-ներն ահազանգում են, որ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող հերթապահ ոստիկանները տեղեկացված չեն ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կառույցների կոնտակտային տվյալների մասին:
- Արտակարգ դրության շրջանում քաղաքականություն մշակողները չունեն մշակած հատուկ ծրագրեր կամ ընթացակարգեր ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար: Լրացուցիչ ֆինանսական միջոցներ ևս առանձնացված չեն:
- Պետական որևէ քաղաքականություն/ծրագիր, շարունակական իրազեկման արշավ կամ կանխարգելիչ միջոցառում դեռևս չի իրականացվում ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ արձագանք տրամադրելու համար արտակարգ դրության շրջանում: Միայն Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն է, որ այս օրերին իրականացրել է իրազեկման որոշակի միջոցառումներ:
- Մինչ օրս չի գործում ընտանեկան բռնության ենթարկված անձանց պետության կողմից տրամադրվող միանվագ դրամական աջակցության դիմելու ընթացակարգը, մասնավորապես, դեռևս ձևավորված չէ բազմամասնագիտական խումբը, որը պետք է իրականացնի շահառուների ընտրությունը:
- Մարդու իրավունքների պաշտպանը մշտադիտարկում է ընտանիքում բռնության իրավիճակը արտակարգ դրության ժամանակ: Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է ընտանիքում բռնությանը վերաբերող հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Հրապարակվել է նաև իրազեկող տեսահոլովակ ընտանեկան բռնության մասին:

- Մեկուսացման պայմաններում շատ կազմակերպություններ սկսել են աշխատել հեռահար տարբերակով, սակայն բոլոր հրատապ դեպքերում, կազմակերպությունների ներկայացուցիչները խախտում են մեկուսացման ռեժիմը և հանդիպում ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ իրենց գրասենյակներում:
- Իրավիճակը խնդրային է դարձել նաև միջքաղաքային հանրային տրանսպորտի գործառնման կասեցման հետ կապված, որովհետև շատ կազմակերպություններ չունեն սեփական ավտոմեքենա և չեն կարողանում հանդիպել կանանց հետ՝ հրատապ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար:
- Հասարակական կազմակերպություններն իրականացնում են ներկա և նախկին շահառուների դեպքերի մշտադիտարկում, ուշադրության կենտրոնում պահելով այն կանանց ու երեխաներին, ովքեր մեկուսացված են բռնարարների հետ միևնույն տան մեջ:
- Ընտանեկան բռնության ենթարկված կանայք չեն կարողանում օգտվել պետական աջակցության ծրագրերից, քանի որ չունեն համակարգչային հմտություններ կամ համացանցին միանալու հնարավորություն: ՀԿ-ներն ահազանգում են սոցիալական աջակցության ակնկալիքով զանգահարող ընտանեկան բռնության ներկա և նախկին շահառուների օրեցօր աճող թվի մասին:
- Հայաստանում գործող 2 ապաստարանները, որոնք ստանում են նաև պետական համաֆինանսավորում, շարունակում են գործառնել արտակարգ դրության պայմաններում՝ ընդունելով նոր կանանց և երեխաների: Մարտ ամսին ապաստարաններում ապաստանվել է 9 կին և 18 երեխա, իսկ ապրիլին՝ 10 կին և 9 երեխա:
- Ապաստարանները չունեն հատուկ պայմաններ և լրացուցիչ ռեսուրսներ նոր ապաստանվող կանանց և երեխաների 14-օրյա մեկուսացումն ապահովելու համար:
- Համաճարակի ընթացքում ՀԿ-ների թեժ գծերի մասին տեղեկատվությունը հիմնականում տարածվում է սոցիալական ցանցերի միջոցով:
- Համաճարակի ընթացքում առավել հրատապ է դարձել ընտանեկան բռնության ենթարկված անձանց հումանիտար աջակցության տրամադրումը և դեպքերի մշտադիտարկումը:
- Երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների և իրավիճակի գնահատման բացակայությունը նպաստել է նրան, որ այս խմբերի նկատմամբ բռնության դրսևորումներն այս օրերին առավել լատենտային/քողարկված են:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող հասարակական կազմակերպությունն իրականացնում է ընտանեկան բռնության ենթարկված շահառուների դեպքերի մշտադիտարկում, սակայն հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում, հավաստի տեղեկատվություն ընտանիքի կողմից կարող է չներկայացվել:
- Երեխաների իրավունքների պաշտպանության ցանցը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և այլ երեխաների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ արտակարգ դրության պայմաններում ստեղծել են առցանց հանդիպումների հարթակ, որի շրջանակներում ամեն շաբաթ քննարկում են երեխաներին առնչվող տարբեր թեմաներ, այդ թվում՝ արձագանքն ընտանեկան բռնությանը արտակարգ դրության պայմաններում: Երեխաների իրավունքներով զբաղվող այս հարթակի կողմից ստեղծվել է մեկ միասնական թեժ գիծ, որի հիմնական նպատակն է բացահայտել և արձագանքել երեխաների իրավունքների ոտնահարման դեպքերին:
- Շատ հասարակական կազմակերպություններ այս օրերին աջակցում են ոչ միայն ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այլ նաև բնակչության տարբեր խմբերին՝ առցանց գրանցելով պետական աջակցության ծրագրերին:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ COVID-19 ՊԱՆԴԵՄԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Առաջարկներ միտված Կառավարության պատասխանատու գերատեսչություններին

- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված պաշտպանական կառույցները և ծառայությունները ճանաչել կենսական ծառայություններ կամ գործունեության կենսական տեսակներ:
- Արտակարգ դրության շրջանում և դրանից հետո պարբերաբար (ցանկալի է ամեն երկու շաբաթը մեկ) հրավիրել «Ընտանիքում բռնության կանխարգելման» խորհրդի հանդիպումներ, որտեղ կքննարկվեն ընտանեկան բռնության խնդիրները COVID-19 պանդեմիայի շրջանում և դրանց հակազդման գործողությունները:
- Մշակել ընտանեկան բռնության արձագանքման գործողությունների ծրագիր COVID-19 պանդեմիայի ժամանակաշրջանի համար՝ օգտվելով այլ երկրներում մեկուսացման շրջանում ընտանեկան բռնության դեպքերով արձագանքման փորձից:
- Հատկացնել լրացուցիչ ֆինանսական և այլ ռեսուրսներ, արտակարգ դրության շրջանում և դրանից հետո, ընտանեկան բռնության ենթարկված անձանց կարիքներին արձագանքելու համար: Մարզային ՀԿ-ներն ունեն նաև մարդկային ռեսուրսների պակաս, քանի որ այս օրերին, աջակցում են բնակչության տարբեր խմբերին՝ դիմելու պետական աջակցության ծրագրերին:
- Պետական աջակցություն ստացող կազմակերպություններին վարակից պաշտպանվելու անվտանգության միջոցների տրամադրում (դիմակներ, ձեռնոցներ, ալկոգել, ջերմաչափ), որոնք կապահովեն ծառայությունների շարունակականությունը և հրատապ արձագանքը դեպքերին:
- Ընտանեկան բռնության ոլորտում աշխատող կառույցների ներգրավվածություն որոշումների կայացման գործընթացներում:
- Ֆինանսական և մեթոդական լրացուցիչ աջակցության տրամադրում ընտանեկան բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կառույցներին՝ հիմնվելով վերջիններիս կարիքների վրա: Ապաստարանների ծառայությունների անվտանգ տրամադրման կանոնների մշակում և ապաստանման հետ կապված լրացուցիչ կարիքների բավարարում, այդ թվում՝ երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց միանվագ դրամական աջակցության (150.000 դրամ) անհապաղ կիրառում:
- Ընտանեկան բռնության դեպքերի, այդ թվում՝ երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների, կենտրոնացած գենդերային տարանջատված/սեգրեգացված հաշվառում:
- Ուսուցիչների, բուժաշխատողների, սոցիալական աշխատողների և բնակչության տարբեր խմբերի հետ աշխատող այլ մասնագետների իրազեկում և արձագանքման մեխանիզմների ներդնում ընտանեկան բռնության դեպքերով:

Առաջարկներ միտված իրավապահ մարմիններին և դատական համակարգին

- Ոստիկանության կողմից ընտանեկան բռնության դեպքերով հատուկ պաշտպանական միջոցառումների ձեռնարկում, այդ թվում՝ ներկա և նախկին հաշվառված տուժողների դեպքերի մշտադիտարկման ընթացակարգի ներդնում և կիրառում:

- Ոստիկանության կողմից ռիսկի գնահատման հատուկ գործիքակազմի մշակում, որը կհամապատասխանի ստեղծված իրավիճակին:
- Բոլոր հերթապահ ոստիկանների հատուկ հրահանգավորում ընտանեկան բռնությունից տուժած անձանց աջակցություն ցուցաբերելու և նրանց ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ:
- Հետաքննիչների, քննիչների, դատախազների և դատավորների կողմից քննչական և դատավարական գործողություններն առցանց և հեռահար եղանակով անցկացնելու իրավական և պրակտիկ հնարավորությունների ստեղծում:
- Իրավապահ և դատական համակարգերի կողմից ընտանեկան բռնության դեպքերի համակողմանի գնահատում՝ հաշվի առնելով բռնարարների և զոհերի միևնույն տարածքում մեկուսացման արդյունքում առաջացած ռիսկերը: Ցանկացած իրավիճակում, ընտանեկան բռնության ենթարկված անձի անվտանգությունը պետք է դիտարկել առաջնային:
- Դատարանների կողմից ընթացիկ պաշտպանական որոշումների դեպքերի ուսումնասիրություն, կարիքից ելնելով՝ որոշումների ժամկետների երկարացում:

<u>Առաջարկներ միտված ծառայություններ մատուցող կառույցներին</u>

- Կազմակերպությունների կողմից վարակից պաշտպանվելու անվտանգության կանոնների մշակում և կիրառում, երբ կազմակերպվում են դեմ առ դեմ հանդիպումներ ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ:
- Հատուկ ընթացակարգերի մշակում և կիրառում ընտանեկան բռնության դեպքերով արձագանքն ապահովելու համար՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը:
- Նախկին և ներկա շահառուների դեպքերի մշտադիտարկում:
- Ընտանեկան բռնության դեպքերի, այդ թվում՝ երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց, գենդերային տարանջատված/սեգրեգացված վիճակագրության վարում:

<u>Առաջարկներ միտված պետական և հասարակական կառույցներին՝ ուղղված իրազեկմանը և ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրման այլընտրանքային միջոցների կիրառմանը</u>

- Արտակարգ դրության օրերին հեռուստատեսությամբ, մասնավորապես՝ մարզային ծածկույթ ունեցող հեռուստաալիքներով, ընտանեկան բռնության ծառայություններ մատուցող կազմակերպությունների թեժ գծերի մասին իրազեկում: Տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նաև երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Հանրային հեռուստատեսությամբ ընտանեկան բռնության մասին իրազեկող հոլովակների, հաղորդումների ցուցադրում: Տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նաև երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- Պետական կառույցների սոցիալական մեդիայի էջերով ընտանեկան բռնության դեպքերի աջակցության և պաշտպանության ձևերի, ծառայությունների մասին իրազեկում:
- Ընտանեկան բռնության անվճար մեկ միասնական թեժ գիծ ծառայության ստեղծում, որը 24/7 սոցիալ-հոգեբանական աջակցություն կտրամադրի ընտանեկան բռնության ենթարկված անձանց: Նախատեսել նաև հաղորդագրությունների միջոցով աջակցություն ստանալու հնարավորությունը:
- Բջջային կապի բոլոր օպերատորների հաղորդագրությունների միջոցով հանրությանը իրազեկել ընտանեկան բռնության դեպքերով աջակցող թեժ գծերի վերաբերյալ:

- Հումանիտար աջակցություն բաշխող բոլոր կառույցներին տրամադրել ընտանեկան բռնության ծառայություններ մատուցող կառույցների թռուցիկները, որոնք կզետեղվեն տարբեր ընտանիքներին բաժանվող սննդի փաթեթներում:
- Խանութներում և դեղատներում ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկող պաստառների տեղադրում:
- Օգտվելով այլ երկրների փորձից՝ մշակել այլընտրանքային և անվտանգ եղանակներ, որոնցով ընտանեկան բռնության ենթարկված անձինք կարող են ստանալ աջակցություն՝ հարմարեցնելով դրանք երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար ևս:

Հավելված 1

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ի 3-րդ վարչության պետ՝ Ն.Դուրյան
2. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության պետ՝ Ա. Գասպարյան
3. ՀՀ գլխավոր դատախազության մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության վարչության պետի տեղակալ՝ Շ. Իսրայելյան
4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ՝ Ս. Բոստանջյան
5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ՝ Ա. Մուրադյան
6. ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ՝ Գ. Ավագյան
7. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական և կրթական կենտրոնի ղեկավար՝ Ն. Փիրումյան
8. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ՝ Վ. Օհանյան
9. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ն. Մանասյան
10. «Երեխաների իրավունքների պաշտպանության» ցանցի ներկայացուցիչ՝ Ա. Մուրադյան
11. «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝ Հ. Գևորգյան
12. «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝ Գ. Բաբայան
13. «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ՝ Տ. Աղաբեկյան
14. «Ագաթ» ՀԿ ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյան
15. «Փինք» ՀԿ ներկայացուցիչ՝ Լ. Վարդանյան
16. «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ ներկայացուցիչ՝ Ա. Գևորգյան
17. «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ ներկայացուցիչ՝ Ս. Մատինյան
18. «Սոսե կանանց հիմնահարցեր» ՀԿ ներկայացուցիչ՝ Լ. Սահակյան
19. «Երիտասարդ Տավուշ» ՀԿ ներկայացուցիչ՝ Մ. Մարալչյան
20. «Արևամանուկ» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ս.Եղիազարյան
21. «Սպիտակի Հելսինկյան խումբ» ՀԿ ներկայացուցիչ՝ Ա. Բաբայան
22. «Դու մենակ չես» ՀԿ ներկայացուցիչ՝ Ն. Հարությունյան
23. «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչ՝ Է. Սանթրոսյան
24. «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչ՝ Մ. Ղալաչյան
25. «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչ՝ Ա. Կարապետյան
26. «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչ՝ Մ. Ապերյան
27. «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Մ. Դավթյան
28. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ ներկայացուցիչ՝ Ա. Դուրյան

Հավելված 2

ԱՐԱԳ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Այս գնահատումն իրականացվում է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից, որի նպատակն է բացահայտել պետական և հասարակական կառույցների արձագանքը ընտանեկան բռնությանը ՀՀ-ում՝ COVID-19 պանդեմիայի և դրա արդյունքում հայտարարված արտակարգ դրության պայմաններում, ինչպես նաև այդ կառույցների կարիքներն այդ դեպքերին արձագանքը տրամադրելու կամ բարելավելու հարցում:

I. Ընդհանուր բնույթի հարցեր

1. Ինչպե՞ս կգնահատեք ընտանեկան բռնության դեպքերով արձագանքն արտակարգ դրության պայմաններում:
2. Ինչպե՞ս կգնահատեք ձեր կառույցի աշխատանքը ընտանեկան բռնության դեպքերով արտակարգ դրության պայմաններում:

II. Վիճակագրություն

3. Փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում ընտանեկան բռնության քանի՞ դեպք է դիմել կառույցին:
4. Հնարավորության դեպքում, կարո՞ղ եք ներկայացնել վիճակագրությունը տարբեր խոցելի խմբերի և մարզերի/քաղաքների բաշխումով (segregated):

Ոստիկանության և Քննչական կոմիտեի դեպքում կարդալ հարցը.

5. Զուգընկերոջ/ամուսնու/որդու կողմից կնոջ նկատմամբ բռնության և մասնավորապես՝ սպանության քանի՞ դեպք է արձանագրվել փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում: Արդյո՞ք այդ դեպքերի թիվն աճել է:

Ոստիկանության և ՀԿ-ների դեպքում կարդալ հարցը.

6. Քանի՞ նախազգուշացում և անհետաձգելի միջամտության որոշում է կայացվել փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում:

ՀԿ-ների դեպքում կարդալ հարցերը.

7. Քանի՞ պաշտպանական որոշման դեպքով եք դիմել դատարան փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում:
8. Վերջին մեկ ամսվա ընթացքում ինչպիսի՞ ընթացակարգով եք դիմում պաշտպանության միջոցների համար: Ինչպիսի՞ խոչընդոտների եք բախվում այդ գործընթացում՝ պայմանավորված արտակարգ դրությունով:
9. Ընտանեկան բռնության ենթարկված քանի՞ կին և երեխա է ապաստանվել փետրվար, մարտ և ապրիլ ամիսների ընթացքում:

III. Հիմնական կարիքներ և արձագանք

ԱՍՀՆ-ի, ԱՆ, ԿԳՄՄՆ, ՄԻ պաշտպանի, ՀԿ-ների դեպքում կարդալ հարցը.

10. Ինչպիսի՞ աջակցության ակնկալիքով են դիմում ընտանեկան բռնության ենթարկված անձինք կառույցին և արդյո՞ք կարողանում եք բավարարել այդ կարիքները։
11. Արտակարգ դրությունով պայմանավորված աջակցության/պաշտպանության ինչպիսի՞ ծրագրեր/ծառայություններ ունեք, որոնք նախատեսված են ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար։
12. Ի՞նչ հատուկ քայլեր են ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ծառայությունները հասանելի և մատչելի դարձնելու ուղղությամբ։

ՀԿ-ների դեպքում կարդալ հարցերը.

13. Արտակարգ դրության պայմաններում ինչպե՞ս են ընտանեկան բռնության ենթարկված անձինք տեղեկանում ծառայությունների մասին։ Արդյո՞ք ուղղորդումներ ունենում եք ոստիկանության և այլ պետական մարմինների կողմից։

ՀԿ-ների, Ոստիկանության և Դատախազության դեպքում կարդալ հարցը.

14. Արտակարգ դրության պայմաններում ինչպե՞ս եք կազմակերպում աշխատանքն ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ։ Ինչպիսի՞ խոչընդոտների եք բախվում։

Քննչական կոմիտեի և ՀԿ-ների դեպքում կարդալ հարցը.

15. Ընտանեկան բռնության գործերով նախաքննության շրջանակներում ինչպիսի՞ ընթացակարգ է գործում արտակարգ դրության պայմաններում, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննության, հարցաքննության, առերեսման և այլ քննչական գործողություններում մասնակցելու համար։
16. Ինչպիսի՞ խոչընդոտների եք բախվում արտակարգ դրությունով պայմանավորված՝ քննչական գործողությունները կազմակերպելիս։

IV. Իրազեկում

17. Այս օրերին արդյո՞ք հատուկ միջոցներ ձեռնարկում եք ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ։ Արդյո՞ք դրանք հասանելի են երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց համար։

V. Հնարավոր աջակցություն

18. Ընտանեկան բռնության դեպքերով աջակցության լրացուցիչ ի՞նչ ռեսուրսների անհրաժեշտություն ունեք /այդ թվում ծառայությունները հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հասանելի դարձնելու համար/։
19. Ընտանեկան բռնության դեպքերով աշխատող մասնագետներն աջակցության ինչպիսի՞ միջոցների անհրաժեշտություն ունեն /այդ թվում ծառայությունները հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հասանելի դարձնելու համար/։